

# ԼՂԻՄ-Ի ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱԴՈՒՆՔԻ ՏԵՍԱՆԿԻՒՆԻՑ

ՀԱՄԼԵՏ ԳԵՒՈՐԳԵԱՆ

Խորհրդային Միությանում վերջերս տեղի ունեցած իրադարձությունները զգալիորեն փոխել են փաստական վիճակը պետական-իրաական տեսապնդումից: Միութենական նոր դաշնագրի առաջարկուած տարբերակը, որդեգրած լինելով կենտրոնացման սկզբունքը, ուժեղացնում է ոչ միայն կենտրոնի դիրքերը, այլև միութենական հանրապետությունների մեկիշխանությունը իր տարածքում, իր կազմի մէջ մտնող ինքնավարությունների նկատմամբ: Միութենական հանրապետությունները (նոյնիսկ ԽՍՀՄ կազմում իրենց մնալը հաւաստող հանրապետությունները) զգալիորեն գերազանցել են գործող Ասիական հարաբերութեան շրջանակները: Սա յատկապէս վերաբերում է Ադրբեջանի Հանրապետութեանը, որը, իրական քայլեր է առնում, որպէսզի հաստատի իր ինքնիշխանութիւնը եւ աստիճանաբար դառնայ միջազգային իրաւունքի սուբյեկտ:

Բայց Ադրբեջանի Հանրապետութեան իրաւական կարգավիճակի ընթացիկ գործնական վերանայման պայմաններում եւ միջազգային հանրութեան մէջ որպէս սուբյեկտ մտնելու՝ նրա համար քաղաքի հեռանկարի տեսանկյունից շի կարող նորից շարունակել եւ նոյնպէս շարունակել իրաւական կարգավիճակի հարցը՝ այս անգամ արդէն միջազգային ի-

րաւունքի տեսանկյունից, որովհետեւ միջազգային հանրութիւնը բացայատորէն բոլորովին այլ պահանջներ է ներկայացնում իր կազմի մէջ մտնելու յաւակնութիւն ունեցող երկրներին, քան միութենական դաշնագիրը եւ ԽՍՀՄ Սահմանադրութիւնը: Իսկ այս՝ միջազգային-իրաւական տեսանկյունից կարելի է նշանակութիւն են ստանում մի քանի (թող որ հանրայայտ) հանգամանքներ:

1. Առաջին հանգամանքը, որ պետք է ուշադրութեան առնուի միջազգային իրաւունքի տեսանկյունից, այն փաստն է, որ Լեռնային Ղարաբաղը, իր ներկայ կարգավիճակով, բռնակցման ենթարկուած՝ բռնազաւթուած, տարածք է՝ այս իրաւաբանական տերմինի երկու իմաստներով էլ. որպէս իր բնակչութեան կամքին հակառակ, այսինքն՝ բռնի կերպով, Ադրբեջանական ԽՍՀի կազմի մէջ մտնուած տարածք եւ որպէս իր բնակչութեան կամքին հակառակ, այսինքն՝ բռնի կերպով, Ադր. ԽՍՀ կազմի մէջ պահուող տարածք:

Այն առաջնային փաստաթուղթը, որով որոշուել է Ղարաբաղը Ադր. ԽՍՀ կազմի մէջ մտնելը, Ռուսաստանի բոլշեւիկեան կուսակցութեան կովկասեան բիւրոյի 1921 թ. Յուլիսի 5ի որոշումն է, որն իրաւական ուժ չունի ոչ թէ այն պատճառով, որ բոլորովին հաշուի չի առել Ղարաբաղի ժողովրդի կամքի ազատ արտայայտումը,

այլ ըստ էութեան՝ au fond, որպէս կուսակցական փաստաթուղթ, որը իրաւաբանական փաստաթուղթ չէ ոչ պետական եւ ոչ էլ միջազգային իրաւունքի մէջ: Բայց նման դէպքերում, երբ առաջնային փաստաթուղթը, որով արձանագրուել է բռնազաւթում, իրաւական ուժ չունի, մնացած բոլոր հետագայ ակտերը, որոնք օրինական տեսք են տալիս կատարուած փաստին, նոյնպէս շունեն իրաւական ուժ ի սկզբանէ՝ ab initio Ռիտմե, այս հիմունքով իրաւական ուժ չունեն Ադր. ԽՍՀ եւ Կրեմլի այն պայմանագրերը, որոշումները, յայտարարութիւնները եւ այլն, որոնք ենթադրում են Լեռնային Ղարաբաղի բռնազաւթումը կամ էլ ուղղակիորէն օրինականացնում են այն:

Ադրբեջանի Հանրապետութեան՝ միջազգային իրաւունքի սուբյեկտ դառնալու ճանապարհին այս հանգամանքը պետք է լինի էական խոչընդոտ, որքանով որ բռնազաւթման հարցում վաղեմութեան ժամկետ գոյութիւն չունի:

2. Միջազգային յարաբերութիւններում ԽՍՀՄ ցայժմ հանդէս է եկել որպէս ամբողջական պետութիւն նաեւ տարածքային առումով: Իր ներքին կեանքում, շնայած Սահմանադրութեամբ հռչակուած հանրապետութիւնների ինքնիշխանութեանը, Խորհրդային Միութիւնը կամայականօրէն (չատյանախ՝ կուսակցական-գաղափարախօսական նկատա-

նումներով) տնօրինել է իր տարածքները՝ դրանց բաշխումն ու վերաբաշխումը, դրանց այս կամ այն իրաւական կարգավիճակ շնորհելը կամ կարգավիճակ փոխելը. յայտնի են շատ դէպքեր, երբ տարածքները յանձնուել են մի հանրապետութիւնից միւսին, ինքնավար մարզերը դարձուել են ինքնավար հանրապետութիւններ, միութենական հանրապետութեան կարգավիճակը փոխուել՝ դարձուել է ինքնավար հանրապետութիւն եւ այլն: Նոյնիսկ կայ մի արտաոց դէպք, երբ անկախ պետութիւնը՝ Տուվայի Ժողովրդական Հանրապետութիւնը, «ներկայել» է Խորհրդային Միութեան մէջ եւ դարձուել... պարզապէս մի ինքնավար մարզ (1944) եւ միայն աւելի ուշ՝ ինքնավար հանրապետութիւն (1961): Արտաքին յարաբերութիւններում Խորհրդային Միութիւնը դիտել է իր տարածքը որպէս իր բացառիկ տնօրինման առարկայ. օրինակ, քանիցս Խորհրդային կառավարութիւնը յայտարարել է, թէ Թուրքիայից տարածքային պահանջներ չունի (նկատի ունենալով Կարսի մարզը, Սուրմալուի գաւառը), բայց երբէք չի հարցրել Հայկական ԽՍՀ կարծիքը, թէ եւ վերջինս համարուել է ինքնիշխան հանրապետութիւն:

Սակայն հիմա իրավիճակն այս տեսակետից էապէս փոխուել է, որքանով որ միանգամայն իրական է դառնում որոշ հանրապետութիւնների՝ ԽՍՀՄ

կազմից դուրս գալու եւ նոր պետութեան կարգավիճակով միջազգային իրաւունքի սուբյեկտ դառնալու հեռանկարը:

Եւ ահա, Խորհրդային Միութիւնը ստիպուած էր ընդունել իր ներքին տարածքային բաժանումը միջազգային իրաւական նորմաներին համապատասխանեցնելու անհրաժեշտութիւնը: Միութեան կազմից որեւէ հանրապետութեան դուրս գալու պայմանների մասին օրէնքի համաձայն, որեւէ հանրապետութեան՝ Միութեան կազմից դուրս գալու դէպքում հարց է դրում, թէ նրա կազմի մէջ մտնող ինքնավար կազմաւորումները ցանկանո՞ւմ են արդեօք նրա հետ միասին դուրս գալ Միութեան կազմից: (Նոյնը վերաբերում է այդ հանրապետութեան որեւէ տարածքային մասում հոծ կերպով բնակուող այլազգի խմբերին. բայց այս դէպքում արդեն ազգային փոքրամասնութիւնների համար մարդու քաղաքացիական իրաւունքների հարցը միտումնաւոր կերպով, յետին նպատակներով յանիրաւի համահաւասարեցում է իր տարածքում ինքնորոշուելու՝ ժողովրդի իրաւունքի հետ): Սա նշանակում է, որ ԽՍՀՄը փաստօրէն ընդունում է՝

(ա) իր ազգային-տարածքային բաժանումների ներքին բնոյթն ու ներքին կիրառելիութիւնը եւ դրանք միջազ-



գային իրաւունքի նորմաներին համապատասխանեցնելու անհրաժեշտութիւնը.

(բ) ժողովուրդների ինքնորոշման սկզբունքի գերակայութիւնը՝ հենց որ հարցը փոխադրում է միջազգային-իրաւական ոլորտ.

(գ) վերոյիշեալ երկու կետերի հիման վրայ՝ հանրապետութիւնների տարածքները վերանայելու անհրաժեշտութիւնը՝ նկատի առնելով ժողովուրդների ինքնորոշման սկզբունքը, այսինքն՝ հանրապետութիւնները չեն կարող նոր պետութեան կարգավիճակով միջազգային իրաւունքի սուբյեկտ դառնալ անվերապահօրէն իրենց այն տարածքներով, որ նրանց վերագրուած է Միութեան ներսում.

(դ) իրենց տարածքներում ինքնորոշուելու ժողովուրդների իրաւունքն այսպիսով դարձում է նախապայման, (1) որպէսզի ԽՍՀՄը ճանաչի դուրս եկող հանրապետութիւնը որպէս միջազգային իրաւունքի սուբյեկտ եւ (2) որպէսզի ԽՍՀՄը համաձայնի, որ միջազգային հանրութիւնը ճանաչի դուրս եկած հանրապետութիւնը որպէս նոր պետութիւն, քանի որ այս նախապայմանի դէպքում է միայն, որ դուրս եկող հանրապետութիւնը չի ունենարում որեւէ ժողովրդի ազատ ինքնորոշման իրաւունքը, որը բացարձակ է:

Այս ամենը նշանակում է, որ Ադր. ԽՍՀՆ իր իրաւական կարգավիճակի որեւէ փոփոխութեան դէպքում, որը հասցնելու է նրա՝ միջազգային-իրաւական սուբյեկտ դառնալու յուսալ հասնելու ճանաչման միջազգային հանրութեան կողմից որպէս միջազգային իրաւունքի սուբյեկտ նոր պետութեան կարգավիճակով:

Եթէ Ադրբեջանի Հանրապետութիւնը քայքայ է անում գործնականում փոխելու ու փաստօրէն բարձրացնելու իր իրաւական կարգավիճակը Խորհրդային Միութեան կազմում կամ ներանցից դուրս եւ ճանաչուելու որպէս միջազգային իրաւունքի սուբյեկտ, սակայն զուգահեռաբար ԼՂԻՄի ժողովուրդը նույնպէս իրաւունք է ձեռք բերում փաստօրէն փոխելու իր իրաւական կարգավիճակը հաւասարապէս միջազգային իրաւական հիմունքով ազգերի ինքնորոշման բացարձակ սկզբունքով:

Եթէ Ադրբեջանի Հանրապետութիւնը յայտնի իր մտադրութիւնը՝ դառնալու միջազգային իրաւունքի սուբյեկտ որպէս նոր պետութիւն, սակայն ԼՂԻՄի ժողովուրդը եւս ինքնաբերաբար ստանում է այդ իրաւունքը:

Եւ եթէ Ադրբեջանի Հանրապետութեան իրաւական կարգավիճակի փաստական, գործնական փոփոխութեան (բարձրացման) պայմաններում Ադրբեջանի հանրապետութիւնը եւ ԽՍՀՄ-ը մերժեն Ղարաբաղի ժողովրդի՝ իր տարածքում ինքնորոշուելու իրաւունքը, ապա Ղարաբաղի ժողովուրդը իրաւունք է ստանում դիմել միջազգային հանրութեանը՝ պահանջելու իրեն ճանաչել որպէս կոմքատանտ՝ իր ինքնորոշման իրաւունքի իրակա-

նպատակին, չի կարող վկայակոչել իր տարածքային ամբողջականութեան պահպանման պահանջը, քանի որ՝

(ա) Միութեան ներսում տարածքային բաժանումը համապատասխանեցուած չի եղել միջազգային իրաւունքի պահանջներին. այդ տարածքը միջազգային-իրաւական տեսակէտից դեռեւս սահմանուած չէ. այն կարող է սահմանուել ազգերի ինքնորոշման սկզբունքի հիման վրայ՝ ոչ միայն ադրբեջանական ժողովրդի համար, այլեւ Լեռնային Ղարաբաղի հայ բնակչութեան համար, որը ներկայումս մարզային ինքնավարութիւն ունի իր տարածքում.

(բ) տարածքի անվերապահ ճանաչումը չի կարող նախորդել որեւէ երկրի ճանաչմանը որպէս նոր պետութեան. ընդհակառակը, տարածքը ածանցեալ է եւ որոշում է ժողովրդի ինքնիշխան իրաւունքներով:

Այնպէս որ Միութեան կազմից հանրապետութիւնների դուրս գալու պայմանների մասին ԽՍՀՄ օրէնքը՝ իր այն մասով, որը վերաբերում է ինքնավարութիւնների կողմից իրենց ինքնորոշման իրաւունքի իրականացմանը, համապատասխանում է (ա) ՄԱԿի կանոնադրութեանը, որքանով որ ընդունում է ազգերի ինքնորոշման սկզբունքի գերակայութիւնը, եւ (բ) բազմազգ եւ գաղութային պետութիւնների տրոհման հետեւանքով նոր պետութիւնների գոյացման եւ դրանց միջազգային ճանաչման պրակտիկային:

3. Արանցից հետեւում է, որ քանի դեռ լուծուած չէ Ղարաբաղի հիմնահարցը, Ադրբեջանի Հանրապետութիւնը չի կարող ճանաչման համար պայքարող ժողովուրդ, ինչպէս այդ նախատեսուած է գաղութային երկրներին եւ ժողովուրդներին անկախութիւն տալու մասին ՄԱԿի յայտարարագրով:

Բայց միջազգային հանրութիւնը չի կարող թոյլ տալ, որ գործը հասնի դրան. նա պարզապէս չի կարող ճանաչել Ադրբեջանի Հանրապետութեան նկրտումները՝ դառնալու միջազգային իրաւունքի սուբյեկտ, որովհետեւ միջազգային հանրութիւնը ստիպուած կը լինի իր վրայ վերցնելու Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրաւունքի երաշխաւորումը:

4. Միջազգային-իրաւական ոլորտում հետզհետէ աւելի վըճռորոշ տեղ է գրաւում մարդու իրաւունքների պաշտպանութեան հանգամանքը: Միջազգային հանրութիւնը եւ ՄԱԿի համապատասխան մարմիններն ու ատենակները տեղեակ են ԼՂԻՄում ադրբեջանական եւ միութենական իշխանութիւնների կողմից մարդու իրաւունքների կոպիտ ոտնահարման մասին, բայց մինչեւ այժմ ամենաբարձր ատենակներում ընդունուած որոշումներն աւարտել են նախագահ Գորբաչովին, խորհրդային կառավարութեանն ուղղուած կոչերով: Ինչ-ինչ հանգամանքների բերումով այդ կոչերին չի յաջորդել յայտարարութիւն հնարատր գործնական սանկցիաների մասին, ինչպէս այդ արուեսց Մերձբայքեան երկրների պարագայում: